

ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔԱՍՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 23/16

ք.Երևան

25 ապրիլի 2018թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), վճարված ճանապարհային վճարի գումարը հետ վերադարձնելու վերաբերյալ Ռուբեն Հարությունյանի դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները

Ռուբեն Հարությունյանը հայտնում է, որ 25.12.2017թ. 60 օրվա համար մուծել է 40.000 դրամի չափով ճանապարհային վճար:

01.01.2018թ.՝ ըստ նոր օրենքի, ճանապարհային վճարը հանվել է:

Ռուբեն Հարությունյանը դիմել է ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ վճարված գումարը վերադարձնելու խնդրանքով, սակայն իրավաբանական վարչության պետի գրությամբ տրվել է մերժման պատասխան: Վերջինիս հետ Ռուբեն Հարությունյանը համաձայն չէ:

Ելնելով վերոգրյալից՝ Ռուբեն Հարությունյանը խնդրում է վերանայել այդ հարցը և տալ դրական լուծում:

Դրական լուծման դեպքում վճարված գումարը խնդրում է փոխանցել «Ինեկոբանկ» թիվ 2050053544561001 հաշվեհամարին՝ Դավիթ Յավրումյանին:

2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

Ռուբեն Հարությունյանը 25.12.2017թ. «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ միջոցով այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներով ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար մուծել է 40.000 դրամի չափով ճանապարհային վճար: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ 01.01.2018թ. ճանապարհային վճար այլևս չի գանձվում, Ռուբեն Հարությունյանը դիմել է ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ վճարված գումարը հետ ստանալու համար: ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի 02.02.2018թ. գրությամբ, հիմք ընդունելով ՀՀ հարկային օրենսգրքի 453-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները, որի համաձայն՝ Օրենսգրքի 9-րդ բաժինը կիրառվում է այն հարաբերությունների նկատմամբ, որոնք ծագել են Օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո, իսկ մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը ծագած՝ ճանապարհային հարկի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը ճանապարհային վճարների հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենսդրությունը, Ռուբեն Հարությունյան դիմումը մերժվել է:

3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ

Մինչև 01.01.2018թ. գործող «Ճանապարհային վճարի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ ճանապարհային վճարը Հայաստանի Հանրապետության

ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման եւ պահպանման աշխատանքները կազմակերպելու և իրականացնելու համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման նպատակով նույն օրենքով սահմանված կարգով և չափով պետական բյուջե վճարվող պարտադիր վճար է:

Նույն օրենքի 4-րդ հոդվածի «ա» կետի համաձայն՝ ճանապարհային վճարի տեսակ է համարվում այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներով ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար վճարը:

Քննարկվող դեպքում հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ռուբեն Հարությունյանի կողմից այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցով ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար 40.000 դրամի չափով ճանապարհային վճարը վճարվել է 2018թ. ընթացքում ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար, ինչպես նաև այն, որ 01.01.2018թ. «Ճանապարհային վճարի մասին» ՀՀ օրենքն ուժը կորցրել է, իսկ ՀՀ հարկային օրենսգրքով նման դրույթ նախատեսված չէ, Հանձնաժողովը գտնում է, որ Ռուբեն Հարությունյանի կողմից վճարված ճանապարհային վճարի գումարը ենթակա է վերադարձման:

4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Ռուբեն Հարությունյանի դիմում-բողոքը՝ վճարված ճանապարհային վճարի գումարը հետ վերադարձնելու վերաբերյալ, բավարարել:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ